## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

- Բողոքը Պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով:
- Գրավոր կարգով ներկայացվող բողոքները կարող են անձամբ ներկայացվել Պաշտպանի աշխատակազմ, ուղարկվել փոստով կամ ներկայացվել առցանց:
- Բողոքի համար հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները, իսկ առկայության դեպքում՝ անհրաժեշտ փաստաթղթերը:
- Բողոքը պետք է ներառի նաև ամիսամսաթիվ և լինի ստորագրված:
- Պաշտպանին ուղղված բողոքները ենթակա չեն ստուգման կամ գրաքննության:
- Բողոքներն իրավասու մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:
- Ոչ ոք իրավունք չունի հոգեբուժարանում գտնվող անձի նկատմամբ գործադրել ճնշումներ և սպառնալիքներ Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի հետ հանդիպելու, զրուցելու, դիմելու և տեղեկություններ տրամադրելու համար:

## ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ


ք. Երևան, Պուշկինի 56ա
+374 10 53 76 51 (քաղաքային)
ombuds@ombuds.am (էլեկտրոնային փոստ)


## ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ


Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116
Սյունիքի մարզ, ք. Կապան,
Արամ Մանուկյան 1/60
+374 285 20116
Տավուշի մարզ, ք. Իջևան,
Անկախության փ., 10 շ., 22 բն.
+374 263-40-116

OMBUDS.AM
PASHTPAN.AM


**116 ԹԵԺ ԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Փետրվար 2020

## ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ ՄԱՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

1) ցանկացած պահի հրաժարվել առաջարկված բուժօգնությունից կամ դադարեցնել այն (բացառությամբ հարկադիր բուժման).

2) պահվել անվտանգ միջավայրում.

3) կոչվել անվամբ կամ ազգանվամբ, ստանալ բարեկիրթ վերաբերմունք.

4) մայրենի կամ հասկանալի լեզվով ստանալ տեղեկություններ իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.

5) ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն.

6) սեփական միջոցներով զննվել նախընտրած բժշկի կողմից.

7) հանգստանալ, դուրս գալ բացօթյա զբոսանքի, զբաղվել մարմնամարզությամբ (կարող է սահմանափակվել բժշկի կողմից).

8) ունենալ ութժամյա գիշերային քուն.

9) ունենալ և ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր, օգտվել անձնական հագուստից.

10) գրել և ստանալ նամակներ (կարող է սահմանափակվել բժշկի կողմից).

11) օգտվել հեռախոսակապից (կարող է սահմանափակվել բժշկի կողմից).

12) հանդիպել այցելուներին (կարող է սահմանափակվել բժշկի կողմից).

13) օգտվել թերթերից և լրագրերից (կարող է սահմանափակվել բժշկի կողմից).

14) ստանալ կենսաթոշակ և սոցիալական պաշտպանության այլ միջոցներ.

15) ստանալ անվճար իրավաբանական օգնություն.

16) հրաժարվել լուսանկարահանումներից և տեսանկարահանումներից.

17) տալ համաձայնություն կամ հրաժարվել փորձարարական նպատակով բուժումից.

18) կնքել գործարքներ (կարող է սահմանափակվել դատարանի կողմից).

19) ներկայացնել դիմումներ և բողոքներ:

## ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ԻՐԱԶԵԿՎԻ ՆԱԵՎ

1) գտնվելու վայրի,

2) հոգեկան խանգարման բնույթի,

3) առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության,

4) կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին:

## ՄԱՐԴԸ ՈՉ ՀՈԺԱՐԱԿԱՄ ԿԱՐՈՂ Է ԲՈՒԺՎԵԼ, ԵՐԲ

o վտանգ է ներկայացնում իր կամ այլոց համար,

o բուժում չիրականացնելը կարող է վատթարացնել իր առողջական վիճակը,

o զննվել է հոգեբուժական հանձնաժողովի կողմից, որը տվել է համապատասխան եզրակացություն,

o հոգեբուժական կազմակերպության տնօրենը դիմել է դատարան՝ անձին ոչ հոժարակամ բուժման ենթարկելու համար, և

o դատարանը կայացրել է անձին ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ վճիռ:

Դատարանում անձի և նրա ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է:

## ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ

o Իրականացնել այցեր հոգեբուժարաններ՝ վատ վերաբերմունքը կանխարգելելու նպատակով: Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պարտավոր չէ հաստատությանը նախապես տեղեկացնել այցերի ժամանակի կամ նպատակի մասին.

o Անարգել տեսակցել հոգեբուժարանում գտնվող անձին և նրա հետ ունենալ առանձնազրույց.

o Ոչ ոք իրավասու չէ գաղտնալսել կամ միջամտել առանձնազրույցին.

o Անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանիչ, օգտագործել տեխնիկական միջոցներ (լուսանկարահանող սարք և այլն).

o Ներկայացնել առաջարկություններ՝ վատ վերաբերմունքը կանխարգելելու, այդ թվում՝ հոգեբուժարանում գտնվող անձի պահման պայմանները բարելավելու նպատակով.

o Տեղում ծանոթանալ ցանկացած փաստաթղթի և ստանալ այդ փաստաթղթերի պատճենները: